

գիտութեանց մէջ ասոր ազնուութիւնը  
և օգուտը ցուցնել և հետևող ընել .  
չըլլայ թէ ընդհակառակն Հայաստան  
նոր նոր ծանօթութեանց ձայներով  
աս ներքին ձայնը խղզէ , նման այն  
Սպարտացւոց կամ Գաղղիացւոց որ  
իրենց անմեղ տղաքը դիւանման կռոց  
սրով և հրով զօհեցնու ատեն , իրենց  
սրտին խշխշուկ ձայները չլսելու հա-  
մար՝ մեծամեծ թմբուկներու թընդ-  
մունքներովը ականջնին կը խլացը-  
նէին :

Հ . Գ . Մ

Բարոյական կին առածներ :

ԽՍԵԼԱՅԻ խօսքերն ու բարի բարի  
խրատները միշտ քաղցր ու ախորժելի  
են մարդուս , մանաւանդ իմաստու-  
թիւն ու ճշմարիտ մարդկութիւն սի-  
րողին , բայց մասնաւոր քաղցրութիւն  
մը ունին ան խրատներն որ մարդս իր  
սրտակերէն կամ մեծերէն լսեր է , ինչ-  
պէս որ ամէն մարդ փորձով կրնայ վը-  
կայել : Հետագայ խօսքերն ու բա-  
րոյական առածներն ալ այսպիսի քաղ-  
ցրութիւն մը ունին իրենց օգտակա-  
րութեանը հետ , որովհետև մեր հին  
ձեռագրաց մէջէն քաղուած են , ու  
ազգային բարոյականի հիմունք են :  
Թերևս մէկ քանին պարսկերենէ  
թարգմանուած են , ինչպէս որ կ'ե-  
րևնայ . բայց իրենց բնական հին ռաւ  
կական սձովը գրեթէ անոնք ալ հայա-  
ցած ու քաղցրացած են :

“ Տղայութիւն 'ի խաղն , երիտա-  
սարդութիւնն յուտեն և յըմպեն ,  
ծերութիւն 'ի թուլանալն . ապա երբ  
զ՚ստուած պաշտես :

Եսօր ձեռք որ կուհասնի՝ բարի  
արա . վաղն որ գնաս՝ այլ բարի ոչ կա-  
րես առնել :

Եյն օր որ 'ի մօրէ կուծնանէիր ,  
ամէնն ուրախանային՝ դու լայիր .  
հանց բան արա որ այն օրն մեռանիս՝

ամէնքն լան , դու ուրախանաս :  
Հետ Եստուծոյ կաց որ տեղ որ  
կաս , որ քեզ որոգայթ և փորձանք  
չիգայ . ով քեզ վատութիւն առնէ ,  
զսիրտդ ամուր կալ , Եստուած ոչ  
տայ զքեզ 'ի փորձութիւն :

Եշամայ որդի , աղօթք արա որ Ես-  
տուած ողորմութիւն առնէ . զի քը-  
նածն կոյր է , տօլլաթն արթուն մար-  
դոյ է :

Եստուծոյ մարդն աստուած լինել  
ոչ կարէ , բայց հեռի յԵստուծոյ ոչ է :  
Մարդն հոգի է և լեզու , և լեզուն  
հոգւոյն չարկամ է . թէ զհոգիդ կ'ու-  
զես՝ զլեզուդ պահէ 'ի հրաման :

Թէ տասն խօսք բարի գիտես , դու  
զինն խօսեաց և զմինն պահէ :

Թէ խօսք շատ գիտենաս , քիչ ա-  
սա . զմէկն հարիւր անգամ մի ասել ,  
զհարիւրն մէկ անգամ ասա :

Խօսքն մօտ 'ի գիտնաւորն մեծ է ,  
վասն զի խօսքն յերկնից եկաւ . իսկ  
դու թեթև մի բուներ :

Ել լեզու , 'ի քո ձեռացդ շատ չար-  
չարանք 'ի ներս եմ'ցեր . կտրեմ զգը-  
լուխդ որ չտաս կտրել զգըլուխ :

Օ խօսքն գիտութեամբ պարտ է  
դաս ասել , ոսկով կշուել և ապա ասել :

Եզուն երկու ճիւղ ունի քան զօ-  
ձու . մէկն մարդարիտ կուժափէ և  
մէկն աղու :

Խօսքն զերթ քամի է 'ի բերանն , և  
որպէս նետ 'ի աղեղն գան . քաշ արա՝  
և ապա թող որ գնա :

Ս ատ կ'առնես՝ քեզ կ'առնես , թէ  
աղէկ կ'առնես՝ քեզ կ'առնես :

Ինձ սիրելի 'ի տրտմութեան ժամն  
պիտի . թէ չէ՝ յուրախութեանն ժամն  
ամէնն են սիրելի :

Սալով մի ուրախանար , և 'ի կեն-  
դանութեանդ մի խնդար . մինն հե-  
ղեղ է՝ կ'երթայ , և մինն քամի է՝ կու-  
գնայ :

Եշխարհս անցանէ և տրտմութիւն  
աշխարհիս , նոյնպէս և ուրախութի .  
ոչ հօրն միայ և ոչ որդւոյն :

1 Թոյն . Կէֆր :

Վիչ ուտելն մարմնոյն շահ է , և սակաւ խօսելն՝ հոգւոյն :

Վիչ ուտել և քիչ խօսելն և քիչ քնելն՝ հոգւոյն շահ է և փրկութիւն :

Վիչ ուտելով մարդոյն ջերմն չբռնէ , այլ շատ ուտելովն հազար մեռանի :

Լստամն ինայելն՝ Պաղտատայ շահն է :

Բռնութեամբ բանն 'ի հուն չեւանէ . այլ կակղութեամբ օձն 'ի ծակէն ելանէ :

Թէ համբերես և ոչ շտապիս , յազոխէն հալուայ կուշինես . թէ լսես՝ շահ է քեզ , թէ չսես՝ ինձ ինչ է :

Յառաջն ուստայ պիտի , ապա բանն . առանց վարպետի բանն դժար է :

Ով ամառն դատարկ 'ի շուրջ գայ , ձմեռն ատամն 'ի վերայ ատամանն տայ :

Թէ ոսկին ասէ , ես հնդստանի եմ , ինչ հաճաթ է , մահաքն՝ կու ճանաչէ :

Բշտապով տօլվաթն , պունեաթ՝ չունի . տօլվաթն այն է՝ որ անկանի և կանգնի :

Վիտենաս թէ Սողոմոնի մատանին զինչ էր գրած . գրած էր բան ոսկի գրով թէ՛ ՄԻՍ ԱՅԼ ԱՆՑԱՆԷ :

Բռիւծն որ որսորդ չլինի՝ աղուէս մի լաւ է քան զնա :

Դամանակն որ դառնութեամբ անցանէ , կարճն լաւ է :

Լսյն մարդն որ յաղուհացն չի պահէ , թէ Յօլսէփ գեղեցիկն է՝ 'ի հօրն լաւ է քան 'ի դուրս :

Վնա հաց կերցուր՝ թէ անուն կ'ուզես , որ հացն անցանի և անունդ մնայ :

Օձեւքդ 'ի ծակն կուտանիս . 'ի յօձու իրածանելու պատրաստ կացիր :

Ի ծով աշխարհիս կ'ալէկոծիս , և մարգարիտ մի 'ի ձեռն չբերիր . ես քեզ խրատ տուի , 'ի ծովու եզեր խորհուրդ արա :

Բրբեցութիւն և ուրախութիւն դիւր գայ ամենայն մարդոյ . ես 'ի

1 Վաստակ . սէտր :  
2 Փորձաբար . Ֆէկէկ :  
3 Հաստատութիւն . պիտիցէն :

լրջութեան ասացի քեզ , 'ի խումարութենէ պատրաստ կացիր :

Պարսիկ առակ ասէ , գաղտնի մեղքն լաւ է քան զյայտնի առաքինութիւնն . թէ աստուածապաշտ ես , փառապաշտ մի լինիր :

Օինչ մարդ որ ասացին թէ ճարտար է՝ դիւրաւ ակնատն անկանի :

Բրծիւն 'ի յերկինքն ելաւ , և հրպարտացաւ թէ ամենայն արարածք 'ի ներքոյ թւիս կան . կտրիճ մի 'ի քարի տակէն 'ի վեր հայեցաւ և եհար զնա նետով Լստուծոյ հրամանաւ . և նա 'ի գետինն անկաւ . տեսաւ յայսկոյս և յայնկոյս որ իւր թւն էր՝ ասաց , ումիչ գանկատիմ երբ յիսնէ է որ խոցեաց զիս :

Լստուծոյ մարդն յարեւելք յարեւմուտք զարիպ չէ . յոր տեղ որ կենայ՝ Լստուծոյ արարած է :

Բարի խօսքն և խրատն մօտ յանգէտ հանց է՝ զինչ թուրքմանն 'ի վերայ գումբէթին ընկուզ ցանէ :

Օինչ խօսք որ ձոհար է՝ 'ի սատաֆի մէջն դիր , և ամէն տեղ մի ցրուեր , այլ 'ի սառաֆն տուր :

Օմարգարիտն և զձոհարն մօտ իմաստունի դիր . մօտ 'ի յէչն և մօտ 'ի կոփն խոտ և ջուր դիր :

Ինքեան գիտակն՝ աստուածաճանաչ և իմաստուն է :

Ի սիրելի մարդոյն և իմաստուն մարդոյն ձեռացն զինչ առնուս՝ շաքար է . յանգէտ մարդոյն ձեռացն թէ մեղր առնուս՝ լեղի է :

ՕԱստուած երբ որ ունիմ՝ այլ ինչո՞ն կուտրտմիմ . աղքատութիւնն թաղաւորութիւն է և թաղաւորութիւն աղքատութիւն . աղքատ այն է որ Լստուծոյ 'ի զատ է . այն մարդն որ զԼստուած ունի՝ աղքատ էր է :

Յամէն որ արեգակն 'ի վեր կուգայ , և մին որ 'ի մեր կենացն պակասեցնէ . այնչափ պատրաստէ զքեզ մինչ 'ի վերջ կենացդ հասանիս , եղբայր :

Բաւուտ եղև , շուտ արի 'ի վեր կտրիճ , պատրաստէ զքեզ որ հասա-

նիս կարաւանին . կարաւանն գնացեր է և դու անպատրաստ 'ի քուն ես :

Հետ վատին քիչ նիստ . թէ չէ՝ քան զքեզ ամէն աղէկի վատ կու դառնաս : Ըրեգակն որ քան զամենայն բարձր է , փոքր մի ամպ 'ի դէմն կանգնի , բուլորն կուխաւարի :

Քո ընկերն քան զքեզ իմաստուն ու լաւ պիտի , որ խելքդ և իմաստու թիւնդ աւելնայ :

Յանգէտ մարդոյն փախիր զինչ ըզնետ . յոյս և ապաւէն իմաստունն արա :

Ըշխարհս սուտ է և աշխարհիս բանն սուտ , և սուտ սրտի համար 'ի սուտն մի փաթու թիր :

Օ իմաստուն մարդ մի հարցուցին՝ թէ աշխարհս զի՞նչ է . ասաց թէ աշխարհս հող է և քամի , և խրտուիլակ մի . ասեն թէ ընդէր սիրեն մարդիկ զաշխարհս , և ասէ . այնպիսիքն խուլ են կամ համր կամ այսահար :

Ի որ ոչ գիտէ , և ասէ՝ ոչ գիտեմ , ուսն՝ զնա . և է որ ոչ գիտէ և ասէ գիտեմ , փախիր 'ի նմանէ . և է որ գիտէ և ասէ՝ ոչ գիտեմ , ուսիր 'ի նմանէ :

Ով որ զբարեկամի զբարի խրատն ատէ , արժան է որ թշնամի 'ի վերայ նորա խնտայ :

Ով մօտ լուսնակն նստի , երեսն նրմանն լուսնի պայծառանայ . ով մօտ սև պուտուկն նստի , երեսն նմանն նրմա կուլինի :

Երեք բան Մտուած 'ի մարդոյն խնդրէ . ւն , ուղղափառ հաւատ . բ , սրբութիւն անձին . դ , ճշմարտութիւն լեզուի :

Ղատի տխմարն որպէս զանասուն , և վարձք ոչ ընդունի :

Հարկևորին հարկիս տուր վասն իւր հարկեացն . անհարկուն հարկիս տուր վասն քո հարկեացդ :

ՈՍԿԻՓՈՐԻԿ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ս'եր աղգին հին յեռափրացը վրայ համառօտ որդեհոթիան :

Ս'եր Հայոց աղգին պատմութիւնը կարգացողը՝ մեր նախնեաց բարեկարգ տէրութիւնն ու խելացի կառավարութիւնը տեսնելով՝ կ'ըսէ թէ հարկաւ ասոնք գրաւոր օրէնք ու զանազան ուրիշ գրքեր ունեցած պիտի ըլլան որ այսչափ ժամանակ կարգով կանոնով տէրութիւն քշեր են . վասն զի անտեղի բան մը կ'երևնայ ըսելը թէ Հայկայ , Արամայ , Պարոյրայ , Տիգրանայ , Աղարշակայ , Արշակայ , Արտաշիսի պէս իմաստուն և ուսումնասէր թագաւորաց ատենը բոլոր արուեստները առաջ երթան Հայոց մէջ , ու միայն կարգաւ գրելը փուճ բան մը սեպուած ըլլայ , անանկ որ և ոչ մէկը պղտի գիրք մը շարագրելու ձեռք զարնէ . նմանապէս Ղողթան գաւառին բանաստեղծները , Սրոյրայ պէս իմաստուն մարդիկը քանի մը բանաստեղծական գրքերով իրենց աշխոյժը ցուցնելու ջանք ըրած չըլլան : Այս խորհրդածութիւնը որչափ որ ճշմարիտ է , այնչափ ալ ցաւալի բան է ան գրքերէն մէկն ալ չունենանինս : Բայց թէ ինչ եղան արդեօք որ հիմա անոնց հետքն ալ չերևնար , մէկ քանի պատճառները պատմութենէն գիտենք , մնացածներուն վրայ ալ ընդհանրապէս աս կրնանք ըսել արտասուօք՝ թէ մեր աղգին վրայ որչափ որ զանազան բունութիւններ , հարբստահարութիւններ ու հալածանքներ եկեր են , գրեթէ բոլորնոյն խելձուութիւնները իրեն ձեռագիրներուն ալ հանդիպեր են . շատը ձեռքէ ձեռք , տնէ տուն , քաղքէ քաղաք , գաւառէ գաւառ ասդիս անդին ձգուած են .